ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 10. 1961 Общественные науки

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՅԻ XXII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1961 թվականի սեպտեմբերին տեղի ունեցավ Հայաստանի Կոմունիստական պարտիայի 22-րդ համագումարը, որ անցավ աշխատանքային ու քաղաքական բարձր վերելքի պայմաններում։ Հայաստանի կոմունիստները և ամբողջ աշխատավորությունը խանդավառությամբ քննարկում և հավանություն էին տալիս կոմունիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծման, կոմունիզմի ծավալուն կառուցման հոյակապ Ծրագրի նախագծին—մեր Լենինյան Կոմունիստական Մանիֆեստին։

Հպարտությամբ նշելով տնտեսության, գիտության, տեխնիկայի և միջազգային քաղաքականության ասպարեզում սովետական մեր մեծ հայրենիքի ձեռք բերած և համաշխարհային ճանաչում գտած նվաճումներն ու հաղթանակները, խաղաղության և միջազգային անվտանգության համար մեր պարտիայի մղած պայքարը, Հայաստանի Կոմունիստական պարտիայի 22-րդ համագումարը՝ պարտիայի Նոր Ծրագրի դրույթների ու հեռանկարների տեսանկյունով գնահատեց հաշվետու ժամանակաշրջանի նվաճումները։ Յոթնամյակի առաջադրանքների կատարման ասպարեզում Հայաստանի բանվորները, գյուղացիներն ու ինտելիգենցիան ձեռք են բերել խոշոր նվաճումներ՝ Հայաստանի Կոմունիստական պարտիայի, նրա կազմակերպությունների ղեկավարությամբ, ելնելով 20—21-րդ համագումարների ուղենիշ որոշումներից։

«Սովետական Հայաստանի էկոնոմիկայի, գիտության և կուլտուրայի անսովոր բուռն ծաղկումը,—ասում է Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Յա. Զարոբյանը, Կենտկոմի հաշվետվության մեջ,—մեր պարտիայի գլխավոր գծի, նրա լենինյան իմաստուն քաղաքականության հաղթանակի նոր ցուցադրումն է»։

Հիմնվելով այդ հաղթանակի ու կոնկրետ նվաճումների վրա՝ համագումարը նշեց պայծառ հեռանկարներ, որոնցով իրենց առաջընթացն են ունենալու Սովետական Հայաստանի արդյունաբերությունը, գյուղատնտեսությունն ու կուլտուրան—կոմունիստական շինարարության ասպարեզում։

Համագումարը ընդգծեց, որ Հայաստանի արդյունաբերության համախառն արտադրանքի արտադրության պլանը 1960 թվականին կատարվել է 102,3 տոկոսով, 1961 թվականի 8 ամսում՝ 102.4 տոկոսով։ Համախառն արտադրանքի ծավալը յոթնամյակի երրորդ տարում, 1958 թվականի համեմատությամբ, կաճի 40 տոկոսով՝ յոթնամյակի կոնտրոլ թվերի նախատեսված 32 տոկոսի դիմաց, նպաստելով ժողովրդի բարեկեցությանը և ուժեղացնելով կոմունիզմի կառուցման պայմանները։ «Ըստ որում՝ համախառն արտադրանքի աճի զգալի մասն ապահովվում է աշխատանքի արտադրողականության բարձրացման հաշվին»։

Արդյունաբերության բարձր մակարդակի մասին է վկայում 150 տեսակի կատարելագործված, բարձր ճշգրտություն ունեցող հաստոցների, մեքենաների, սարքերի, նոր նյութերի և առարկաների արտադրությունը։

Հաշվետու շրջանում ստեղծվել են արդյունաբերական նոր ձեռնարկություններ, կայն զարգացում են ստացել գունավոր մետալուրգիան ու լեռնային արդյունաբերությունը, քիմիական արդյունաբերությունն ընթացել է արտադրությունն ընդլայնելու գծով, ընդարձակվել են էլեկտրամեքենաշինական, էլեկտրատեխնիկական և մի շարք այլ գործարաններ, արագ տեմպերով աճում է մեքենաշինությունն ու նրա արտադրանքի ծավալը։ Այդ նվաճումների փայլուն ցուցանիշների վկայություններից մեկն է և այն, որ մեքենաշինությունը «արդեն ընթացիկ տարում թողարկելու է ավելի քան 6,200 հաստոց, կամ 63 տոկոսով ավելի, քան 1960 թվականին»։

Սոցիալիստական արդյունաբերության էներգետիկ զինվածության ընդարձակման համար առանձնապես կարևոր նշանակություն ունեցավ Աղստաֆա—Աթաբեկյան էլեկտրահաղորդման բարձրավոլտ գծի շահագործման հանձնելը, մի շարք արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների ու շրջանների բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծերի ստեղծումը, ջերմաէլեկտրակայանների կառուցումը Երևանի, Հրազդանի ու Կիրովականի շրջաններում։ «Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմը,—ասված է ընկեր Յա. Զարոբյանի զեկուցման մեջ,—շարունակում է այն գիծը, որ արդյունաբերական նոր ձեռնարկություններ ստեղծվեն և ընդլայնվեն ո՛չ միայն Երևանում, այլև ռեսպուբլիկայի մյուս քաղաքներում ու շրջաններում»։

Սրանք ձեռնարկումներ են, որոնք ապահովում են Հայաստանի ոչ միայն լեռնամետալուրգիական, քիմիական, շինարարական և արդյունաբերական բազմազան ճյուղերը, այլ նաև թեթև արդյունաբերության ու գյուղատնտեսության էներդոտեխնիկական վերազինումն ու աննախընթաց վերելքը, կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ամրապնդումը և աշխատավորների նյութական բարեկեցության բարձրացումը։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի 22-րդ համագումարը արձանագրեց, որ Հայաստանի պարտիական կազմակերպությունները, կոլտնտեսությունները ու սովխոզները, իրականացնելով ՍՄԿՊ Կենտկոմի դեկտեմբերյան (1959 թ.) պլենումի որոշումները՝ 1960 թվականին որոշ հաջողությունների հասան նաև գյուղատնտեսական մթերքների ավելացման ասպարեզում, իսկ 1961 թվականի 8 ամսում, անցյալ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատությամբ, ռեսպուբլիկայի կոլտնտեսություններում ու սովխոզներում ավելացավ անասունների բոլոր տեսակների գլխաքանակը։ Բարձրացավ մսի, կաթի, բրդի, ձվի արտադրությունը։ Նախորդ համագումարից անցած ժամանակաշրջանում ոռոգելի հողերի տարածությունն ընդարձակվել է 9,300 հեկտարով և բացի դրանից ջուր է մատակարարվել 15,000 հեկտար ամառային արոտավայրերի։ 1960 թվականին և 1961 թվականի դարնանը տնկվել են 4,430 հեկտար խաղողի և 3,610 հեկտար պտղատու այգիներ։ Իսկ 1961—1965 թվականների ընթացքում կոլտնտեսությունները ու սովխոզները պետք է դցեն խաղողի 18,000 և պտղատու 15,900 հեկտար այգիներ։ Համագումարը արձանագրում է ռեսպուբլիկայի պարտիական կազմակերպությունների տարած որոշակի աշխատանքը կոլտնտեսությունների կազմակերպական ամրապնդման ուղղությամբ և կոլտնտեսությունների բազայի վրա 35 սովխոզների ստեղծումը։ Հատկապես ընդգծվում է սովխոզների ամրապնդման աշխատանքի անհրաժեշտությունը, քանի որ ռեսպուբլիկայի 119 սովխոզներից շատերը դեռ չեն դարձել օրինակելի տնտեսություններ։

22-րդ համագումարը հատկապես ընդգծեց, որ «մեր ռեսպուբլիկայի համար գյուղատնտեսության հետագա զարգացման ասպարեզում տնտեսապես առավել նպատակահարմար ուղղությունը գլխավորապես արդյունաբերության, խաղողագործության, ինտենսիվ անասնաբուծության, բանջարաբուծության և ծխախոտագործության զարգացումն է»։ Համագումարը կոնկրետ միջոցառումներ նշեց գյուղատնտեսության բուռն վերելքի, հողագործության ու անասնաբուծության բոլոր արտադրական պրոցեսները մեքենայացնելու և էլեկտրաֆիկացնելու, խոշոր ջրամբարների, ոռոգման ջրանցքների ու ջրման կայանների կառուցման ասպարեզում։

Ժողովրդական բարեկեցությանը նպաստող այս նվաճումների ու հեռանկարների հետ միասին համագումարը կանգ առավ Հայաստանի արդյունաբերության ու գյուղատնտեսության, ինչպես նաև կապիտալ շինարարության, առևտրի, տրանսպորտի բնագավառում դեռևս նկատվող թերությունների վրա, որոնք տեղի են տալիս հետամնաց և դեռ չհաղթահարված երևույթների։ Նշելով ծեռք բերած հաղթանակները և սրելով պարտիական-կազմակերպչական աշխատանքի մակարդակն ավելի բարձրացնելու և պետական ապարատի աշխատանքները ավելի բարելավելու հարցերը, արհմիութենական ու կոմերիտական կազմակերպությունների աշխատանքների ավելի ակտիվացման հարցերը՝ համագումարը միաժամանակ հատուկ ուշադրություն է կենտրոնացնում գաղափարական աշխատանքների, աշխատավորների կոմունիստական դաստիարակության, արդյունաբերության, գյուղատնտեսական, վարչական ու գիտական կադրերի որակի բարձրացման, նրանց ճիշտ օգտագործման ու բաշխման վրա։

Այսօր Հայաստանի արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ կոմունիստական աշխատանքի կոլեկտիվի կոչման համար պայքարում են ավելի քան 3400 բրիգադներ, ցեխեր ու հերթափոխություններ, որոնք արդեն աշխատում են կոմունիստական սկզբունքներով։ Նրանց ներկայացուցիչները իրենց փորձով ու գիտությամբ զինված, ակտիվ մասնակցություն ունեցան 22-րդ համագումարին՝ որպես պատգամավորներ, նորանոր պարտականություններ վերցրին իրենց վրա՝ պարտիայի Նոր Ծրագրի մեջ առաջադրված խնդիրներն իրականացնելու համար։

* * *

Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման, արտադրության ու մշակույթի զարգացման հարցերում համագումարը առանձնահատուկ տեղ է հատկացրել Սովետական Հայաստանի տեխնիկական ու հասարակական գիտություններին, որոնց մեծ վերելքը օժանդակում է մեր երկրի տնտեսական-մշակութային բուռն աճմանը, առաջին հերթին տեխնիկական պրոգրեսի բնագավառում։

Համագումարը նշեց, որ Հայաստանի գիտնականների աշխատանքը իր հիմնական մասով սերտորեն կապված է մեր արտադրության հետ։

«Գիտությունը պետք է ավելի լավ շաղկապվի գյուղատնտեսական արտադրության պրակտիկայի հետ»,—ասում է ընկ. Յա. Զարոբյանը։

Նա նշում է, որ ռեսպուբլիկայում նոր տեխնիկայի արմատավորման ասպարեզում վերջին շրջանում կիրառվել են 590 միջոցառում, այդ թվում սարքավորումների մոդեռնացում։ Ռեսպուբլիկայի գիտահետազոտական աշխա-

տանքը անմիջականորեն մոտեցվում է արտադրության բազում ճյուղերին և Հայաստանի Ժողտնտխորհի սիստեմում հաշվետու շրջանում ստեղծվել են 8 գիտահետազոտական ու նախագծային ինստիտուտներ և 165 կոնստրուկտորական բյուրոներ և լաբորատորիաներ։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի քիմիական ինստիտուտի աշխատանքների շնորհիվ նեֆելինային սիենիտների կոմպլեքսային վերամշակման հիման վրա ստեղծվում է Հրազդանի խոշոր լեռնա-քիմիական կոմբինատ, որ արտադրելու է արդյունաբերության մի շարք ճյուղերի համար անհրաժեշտ քիմիական կարևոր ու բազմազան նյութեր։

Իրենց առաջ խոշոր ծրագիր են դրել և իրականացնում են նաև էլեկտրամեքենաշինական արդյունաբերությունը, մաթեմատիկական մեքենաների, լեռնա-մետալուրգիական գիտական ինստիտուտները, «Ավտոմատիկա» հատուկ կոնստրուկտորական բյուրոն և այլն։

Համագումարում հատկապես ընդգծվում են Հայաստանի գիտության զարգացման նվաճումներն ու հեռանկարները։

«Ռեսպուբլիկայում տարեցտարի ուժեղ թափ է ստանում գիտահետազոտական աշխատանքը,—ասված է Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի հաշվետվության մեջ։ Ներկայումս Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի և գերատեսչությունների սիստեմում կա 79 գիտահետազոտական հիմնարկ, որտեղ 3,409 գիտական աշխատող, այդ թվում՝ գիտությունների 79 դոկտոր և 734 թեկնածու, ստեղծագործաբար աշխատում, իրենց ավանդն են մուծում սովետական գիտության ու տեխնիկայի հետագա զարգացման գործում։ Մեծ թվով գիտական կադրեր զբաղված են ռեսպուբլիկայի ուսումնական հաստատություններում, հիմնարկներում և ձեռնարկություններում։

Մեծ աշխատանք է տարվում ռեսպուբլիկայի Գիտությունների ակադեմիայի գիտական հիմնարկներում, որոնց աշխատանքների մի մասը համաշխարհային ճանաչում է գտել։ Կենտկոմի հաշվետվության մեջ հպարտությամբ է նշվում «աստրոֆիզիկայի ասպարեզում նոր ուղղությունների առաջացումն ու զարգացումը, որոնք նոր ձևով են մոտենում տիեզերքի կառուցվածքի և էվոլյուցիայի պրոբլեմին, լուրջ ազդեցություն գործեցին Բյուրականի աստրոֆիզիկական աստղագիտարանի աշխատանքները՝ ակադեմիկոս Վ. Համբարձումյանի ղեկավարությամբ, որը վերջերս ԱՄՆ-ում ընտրվեց Միջազգային աստղագիտական միության պրեզիդենտ»։

Այնուհետև համագումարում մատնանշվում է, որ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ֆիզիկայի ինստիտուտի կոլեկտիվը վերջին երկու տարվա ընթացքում զբաղվում էր կոսմիկական ճառագայթների և տարրային մասնիկների ուսումնասիրման ասպարեզում չափազանց կարևոր հետազոտություններով։

Ջրային պրոբլեմների ինստիտուտը մշակել է Սևանա լճի և Սևան—Հրազդան սիստեմի ջրային ռեսուրսների ռացիոնալ ու կոմպլեքսային օգտագործման սկզբունքային սխեմայի գիտական հիմքը։

Ժամանակակից տեխնիկայի համար մեծ նշանակություն ունեն ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում կատարվող աշխատանքները, որոնցից շատերը համաշխարհային հռչակ են ստացել։

Համագումարը գոհունակությամբ է արձանագրում, որ ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի բուռն զարգացումը և մեր գիտնականների կողմից լուծվող պրոբլեմների ժողովրդատնտեսական մեծ նշանակությունը պահանջեցին ռեսպուբլիկայում ստեղծել գիտահետազոտական նոր հիմնարկներ։

Հաշվետու ժամանակաշրջանում Գիտությունների ակադեմիայի սիստեմում ստեղծվել են ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, էներգետիկայի, ջրային պրոբլեմների, միկրոբիոլոգիայի, բիոքիմիայի, գեոֆիզիկայի և ինժեներական սեյսմոլոգիայի, կարդիոլոգիայի և սրտային վիրաբուժության ինստիտուտներ, ինչպես նաև կազմակերպվել են բարձրագույն ուսումնական հաստատություններին առընթեր պրոբլեմային լաբորատորիաներ։

«Դժբախտաբար, մի շարք գիտական հիմնարկների գործունեության մեջ էական թերություններ կան,—նշում է ընկ. Յա. Զարոբյանը,—հաճախ առանձին գիտական աշխատակիցներ և նույնիսկ ինստիտուտների սեկտորներ ու բաժիններ տարիներով զբաղվում են այնպիսի աշխատանքներով, որոնք առանձին արժեք չեն ներկայացնում ոչ տեսական իմաստով, ոչ էլ գործնական տեսակետից, նկատվում է շարդարացված բազմաթեմայություն... Առանձին թեմաների մշակման ժամկետները խիստ ձգձգվում են։

Մեր մի քանի գիտական աշխատակիցներ բավարար հետևողականություն չեն ցուցաբերում իրենց իսկ մշակած արժեքավոր առաջարկությունները ժողովրդական տնտեսության մեջ ներմուծելու հարցերում»։

Գիտության առջև կանգնած մեծ խնդիրները հաջողությամբ լուծելու համար համագումարը պահանջում է զգալիորեն բարելավել գիտական աշխատանքների պլանավորումը, իրագործել աշխատանքի անհրաժեշտ բաժանումը բոլոր գերատեսչությունների միջև, և իրականացնել գիտական հիմնարկների մասնագիտացումն ու կոոպերացումը, գիտական կադրերի պատրաստումը և գիտական գործունեության մեջ ավելի լայնորեն ներգրավել արտադրության առավել պատրաստված աշխատողների, համարձակորեն առաջ քաշել երիտասարդ գիտնականներին, որոնք հին և փորձված գիտական կադրերի հետ համագործակցված առաջ կշարժեն մեր գիտությունն ու տեխնիկան, և միաժամանակ իրենք էլ ստեղծագործաբար կաճեն։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի հաշվետու զեկուցման և ընդունված բանաձևի մեջ կարևոր տեղ են գրավում նաև հասարակական գիտությունները։

«Գաղափարական աշխատանքի ասպարեզում մեծ ու պատասխանատու խնդիրներ են ծառացած հասարակական գիտությունների բնագավառում աշխատող գիտնականների առաջ»,—ասվում է հաշվետու զեկուցման մեջ։

Շեշտելով, որ հաշվետու ժամանակաշրջանում հայ ժողովրդի պատմության և կուլտուրայի հրատապ հարցերի վերաբերյալ հրապարակվել են մի շարք աշխատություններ, լուրջ աշխատանք է կատարվել հայ ժողովրդի յոթ հատորանոց պատմության պրոսպեկտ կազմելու ուղղությամբ, մշակվում են թեմաներ հայ-ռուսական հարաբերությունների, ինչպես նաև մեր ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի ուսումնասիրման ուղղությամբ, ընկեր Զարոբյանը միաժամանակ նշում է, թե հասարակագիտական աշխատանքների թերությունն այն է, որ նրանք հետ են մնում այսօրվա հետ

կապված տնտեսական, կուլտուրական, կոմունիստական շինարարության գործնական խնդիրներից։

Հասարակական գիտությունների աշխատողները պարտավոր են հատուկ ուշադրություն դարձնել Հայաստանի պատմության սովետական շրջանին, պրոլետարական ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության պրոբլեմներին նվիրված աշխատություններ ստեղծելուն։

Համագումարն իր բանաձևում հասարակական գիտությունների ինստիտուտների և բարձրագույն ուսումնական հաստատությունների հասարակագիտական ամբիոնների ուշադրությունն հրավիրում է այն բանի վրա, որ «անհրաժեշտ է խոր կերպով և բազմակողմանիորեն մշակել ՍՄԿՊ Ծրագրի նախագծի առաջ քաշած՝ կոմունիստական շինարարության տեսական կարևորագույն պրոբլեմները, ինչպես նաև ակտիվորեն մասնակցել պարտիայի 22-րդ համագումարի նյութերի պրոպագանդմանը»։

Հասարակագիտական, պրոպագանդիստական ու մասսայական-քաղաքական աշխատանքների, մարքս-լենինյան դաստիարակության կարևորագույն խնդիրը համագումարը համարում է սովետական մարդկանց դաստիարակությունը մարքսիզմ-լենինիզմի ոգով, պրոլետարական ինտերնացիոնալիզմի ու սովետական հայրենասիրության, Սովետական Միության հերոսական ժողովուրդների բոլոր նվաճումները մինչև վերջ պաշտպանելու պատրաստակամության ոգով և պայքարը՝ կենցաղի և գիտակցության միջից անցյալի մնացուկները վերացնելու համար։

Գաղափարական աշխատանքի մեջ ժողովրդի հոգևոր ու բարոյական հարստացման գործում Հայաստանի Կոմունիստական պարտիայի 22-րդ համագումարը պատվավոր դեր է հատկացնում նաև սովետահայ գրականությանն ու արվեստներին։ Նշելով այդ ասպարեզում ձեռք բերած արժեքավոր գործերը, տեղ գտած թերությունները, նա առաջարկում է բարձրացնել գաղափարական-ստեղծագործական աշխատանքը, «հետևողական, համառ պայքար մղել գրականության և արվեստի զարգացման գլխավոր ուղղության՝ ժողովրդի կյանքի հետ սերտ կապի համար, այն բանի համար, որ արդիական թեմատիկան առաջատար տեղ գրավի գրողների ու արվեստի գործիչների ստեղծագործության մեջ, գեղարվեստական երկերում բարձրարվեստ և ճշմարտացի կերպով արտացոլվի սովետական մարդկանց հերոսական աշխատանքն ու ժամանակակից կյանքը»։

Համագումարը գոհունակությամբ նշեց մեր երկրի տնտեսության զարգացման համար կարևորագույն հարցի, Սևանի ջրերի նպատակահարմար օգտագործման ու նրա մակերեսի անհրաժեշտ մակարդակի պահպանման հարցը, որ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի, Սովետական Միության Կառավարության և հատկապես ընկ. Ն. Ս. Խրուշչովի օժանդակությամբ լուծվեց՝ Արփա գետի ջրերի մի մասը դեպի Սևանի լիճը դարձնելու միջոցով։

Հսկայական քաղաքական և ազգային նշանակություն ունի մեր ժողովրդի համար նաև համագումարի որոշումը՝ արտասահմանի հայրենաբաղձ հայերի սիստեմատիկ ներգաղթը կազմակերպելու, օտար երկնքների տակ դեգերող հայերին իրենց հարազատ հայրենիքը վերադարձնելու մասին։

Համագումարը ողջույնի ներքո իր երախտագիտության ու շնորհակալության զգացումը հղեց ՍՄԿՊ Լենինյան Կենտրոնական Կոմիտեին և իր պատրաստականությունը հայտնեց միաձույլ ու միասնական շարքերով պայքարե-

լու կոմունիզմի իրականացման, ամբողջ աշխարհի աշխատավորության աղատագրման ու խաղաղության համար՝ մեծ Լենինի գծած ուղիով։

Հայաստանի Կոմունիստական պարտիայի 22-րդ համագումարը՝ համակված պարտիական այդ մեծ փաստաթղթերի ոգով՝ լիակատար հավանություն տվեց պարտիայի Նոր Ծրագրի նախագծին, այն համարելով «նոր խոշոր ավանդ մարքսիզմ-լենինիզմի գանձարանում», փաստաթուղթ, որ «հանդիսանում է Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի ստեղծած հռչակավոր կոմունիստական Մանիֆեստի և Վ. Ի. Լենինի մշակած մեր պարտիայի նախորդ ծրագրերի գաղափարական ժառանգորդը»։

Համագումարը միահամուռ կերպով ընդգծեց, որ «ՍՄԿՊ Նոր Ծրագիրը մոբիլիզացնող հսկայական ուժ ունեցող փաստաթուղթ է, որ ժողովրդական մասսաներին ոգեշնչում է աշխատանքային նոր սխրագործությունների, նրանց ստեղծագործական ջանքերն ու եռանդն ուղղում ժողովրդական տնտեսության, գիտության ու կուլտուրայի հետագա հզոր զարգացման, մեր երկրում կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման նպատակին, նա էլ ավելի կբարձրացնի արդիականության մեծագույն հոգևոր ուժ հանդիսացող ստեղծագործական մարքսիզմի դրոշը, կործանիչ հարված կհասցնի իմպերիալիստական բուրժուազիայի ռեակցիոն գաղափարախոսությանը, ռեֆորմիզմի ու ուլտրոնիզմի, նացիոնալիզմի ու շովինիզմի, դոգմատիզմի ու աղանդավորության գաղափարախոսությանը»։

Հայաստանի կոմունիստների 22-րդ համագումարը մարքս-լենինյան այս դիրքերից գնահատեց Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի ղեկավարությամբ հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումները և ելնելով ՍՄԿՊ-ի Նոր Ծրագրից ու Կանոնադրությունից, գծեց իր աշխատանքի առաջիկա ու մեծ հեռանկարները, նրանց իրականացման համար անհրաժեշտ կոնկրետ խնդիրները։

Համագումարը աշխատանքային նոր լիցք ու ստեղծագործական նոր խանդավառություն ներշնչեց ոչ միայն Հայաստանի արդյունաբերության ու գյուղատնտեսության, պարտիական ու անպարտիական լայն շրջաններին, այլև սովետական ինտելիգենցիային ու գիտության աշխատողներին։

«Կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծումը պահանջում է գիտության ծաղկում, պահանջում է, որ գիտնականներն ակտիվորեն մասնակցեն մեր երկրի արտադրողական ուժերի հետագա համակողմանի զարգացման հետ կապված պրոբլեմների լուծմանը» (Ն. Ս. Խրուշչով)։ Մեր երկրի արտադրողական ուժերի համակողմանի զարգացման առաջնահերթ պայմաններից մեկն է նաև սովետական մարդկանց հասարակական-քաղաքական գիտակցության, նրանց մտավոր ու հոգեկան աշխատանքի կոմունիստական կազմակերպման հարցը, որ հասարակական գիտությունների սրբազան պարտականությունն է։

Մեծ և պատասխանատու են պարտականությունները, որ Հայաստանի Կոմունիստական պարտիայի համագումարը դնում է տեխնիկական ու հասարակական գիտությունների աշխատողների առաջ, նշելով ոչ միայն նրանց նվաճումները, այլև նրանց աշխատանքներում դեռևս չհաղթահարված թերությունները։

Սովետական ժողովուրդը, Սովետական պետությունը, Լենինի պարտիայի ղեկավարությամբ, ՍՄԿՊ ձեռք առած միջոցառումներով ստեղծել է մեր երկրի

բարգավաճման, մեր ժողովրդի բարօրության պայմանները և պայքարում է ամբողջ աշխարհի խաղաղության ու աշխատավորների ազատագրման համար. նա գծել է կոմունիզմի իրականացման վեհ ծրագիրը, ստեղծել է բոլոր հնարավորությունները մեր գիտության արագ ու անխափան զարգացման, սովետական գիտության համաշխարհային առաջնության համար։ Եվ այս ամենը մեծ պարտք են դնում մեր գիտության աշխատողների առաջ՝ անձնվիրաբար, իրենց ամբողջ եռանդն ու կարողությունը ի սպաս դնելու կոմունիզմի իրականացման անմահ գործին։